ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Անժելիկա Ստեփանյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Տիրանա (Ալբանիայի Հանրապետություն), 2024 թվականի նոյեմբերի 4-ից նոյեմբերի 8-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ Պետական ծախսերի կառավարման փոխադարձ ուսուցման ցանցի (PEMPAL) գանձապետական համակարգի գործնական համայնք (TCOP)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցություն Պետական ծախսերի կառավարման ուսուցման (PEMPAL) ցանցի գանձապետական համակարգի գործնական համայնքի (TCOP) կողմից կազմակերպվող «Strengthening and Measuring Treasury Performance in Cash Management and Forecasting» թեմայով համաժողով:

5. Քննարկված թեմաները.

- Կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման համակարգն Ալբանիայում. ձեռքբերումները և ռազմավարական առաջնահերթությունները,
- Կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման արդյունավետության բարելավման և չափման մոտեցումները,
- Պետական պարտքի կառավարման և գանձապետական համակարգի փոխգործակցությունը կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման տեսանկյունից,

- Գանձապետարանի կատարողականի գնահատում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման գործառույթների համար կատարողական ցուցանիշների կիրառմանը,
- PEMPAL երկրներում գանձապետարանի դերը և զարգացումը,
- Մասնակից երկրների կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման ոլորտում վերջին տարիների ձեռքբերումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում զեկույցներով հանդես են եկել ինչպես մի շարք երկրների ներայացուցիչներ, այնպես էլ միջազգային փորձագետներ՝ ներկայացնելով կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման գործող համակարգերը, արդի մարտահրավերները և զարգացման հեռանկարները: Մասնավորապես, ուշադրություն է դարձվել կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման գործառույթների կատարողական ցուցանիշների սահմանմանը և կիրառմանը: Այս համատեքստում ՀՀ պատվիրակության կողմից հանդես եմ եկել զեկույցով՝ ներկայացնելով ՀՀ-ում կանխիկ հոսքերի կառավարման և կանխատեսման համակարգի առանձնահատկությունները և կիրառվող գործիքակազմը:

Համաժողովի ընթացքում ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնց շրջանակներում մասնակից երկրների ներկայացուցիչները կիսվել են գանձապետական համակարգի արդյունավետության մի շարք ցուցիչների գնահատման արդյունքներով:

Համաժողովի ավարտին խմբերը քննարկել և մասնակիցներին են ներկայացրել ամփոփ դիտարկումներ՝ կապված հանդիպումների արդյունքում հիմնական ձեռքբերումների և առկա թերացումների հետ, ինչպես նաև մտքեր են փոխանակվել հետագա հանդիպումների ընթացքում քննարկման ենթակա հնարավոր առաջնահերթ թեմաների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ավարտին կայացել է TCOP գործադիր կոմիտեի նիստ, որի արդյունքներն ամփոփելուց հետո որոշում կկայացվի հաջորդ հանդիպման և քննարկման դրվող հարցերի շրջանակի վերաբերյալ: Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չեն եղել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անժելիկա Ստեփանյան

13 նոյեմբերի, 2024թ.